ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ ԹԻՎ 52-Ն ԵՎ 53-Ա-57-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 52-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի դրույթները սխալ են համարակալված:

Թիվ 53-Ա որոշման նախաբանում ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմանը կատարված հղումը սխալ է գրառված: Բացի այդ, որոշումը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 58-րդ կետին, համաձայն որի՝ եթե գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր չի կնքվում, ապա այդ ընթացակարգը չկայացած է հայտարարվում,և օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է գնման նոր ընթացակարգ:Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել՝ համապատասխանաբար ՀՀ կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա:

Թիվ թիվ 53-Ա-57-Ա որոշումների նախաբաններում և 1-ին կետում նշված «Արթիկ» բառից առաջ անհրաժեշտ է գրառել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի» բառերը:

Թիվ թիվ 55-Ա-57-Ա որոշումներով անվավեր ճանաչվող իրավական ակտերի հերթական համարները վերնագրերում, 1-ին կետերում և նախաբաններում տարբեր են գրառված:

Թիվ թիվ 56-Ա, 57-Ա որոշումների վերնագրերում անվավեր ճանաչվող իրավական ակտերի կրճատ անվանումները ճիշտ չեն գրառված:

Թիվ թիվ 54-Ա-57-Ա որոշումների 2-րդ կետերում նշված ժամկետները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին»ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ

մասի դրույթին, համաձայն որի՝ անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
09.10.2020թ.